RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 1—ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ 2022 թ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2022 թ. 1-ին եռամսյակի Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2022 թվականի 1-եռամսյակի ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **30.8 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **11.4 մլրդ ՀՀ դրամով** կամ **59%-ով** ավել է քան 2021 թվականի 1-եռամսյակի ընթացքում գրանցած արդյունքը:
- Ամերիաբանկի շահույթը գրեթե կրկնապատկվել է և կազմել է շուրջ **7.5 մլրդ ՀՀ դրամ**:

- Երեք բանկեր (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ Ինեկոբանկ արձանագրել են Հայաստանի բանկային համակարգի զուտ շահույթի 50%-ը:

Բանկերի զուտ շահույթը 1եռամսյակ 2022 - 1եռամսյակ 2021 թթ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2022 թվականի 1-եռամսյակի ընթացքում աճել են **98 մլրդ ՀՀ դրամով,** կամ **1.4%-ով:**

- Առ 31.03.2022, ընդհանուր ակտիվները կազմել են **7.168 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկերի ընդհանուր ակտիվները - 31.03.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **56%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **42.4%:**
- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **15.5%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 31.03.22



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2022 թվականի 1-եռամսյակի ընթացքում աճել է **2.8%**-ով:
- Առ 31.03.2022 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **4.139 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **58%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 1 եռամսյակ 2022 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **61%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **46%:**
- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **17.2%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.03.22



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2022 թվականի 1-եռամսյակի ընթացքում նվազել են **49 մլրդ ՀՀ դրամ-ով,** կամ **0.8%-ով**:

- Առ 31.03.2022, ընդհանուր պարտավորությունները կազմել են **6.069 մլրդ ՀՀ**:



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2022 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում նվազել են **23 մլրդ ՀՀ դրամ-ով,** կամ **0.6%-ով**:
- Առ 31.03.2022, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **3.848 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **63%:**

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ
- 31.03.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը նվազել են է 2022 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում **4.4 մլրդ ՀՀ դրամով,** կամ **1%**-ով և կազմում է **441 մլրդ ՀՀ դրամ:**
- **17** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **12**-ը:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 31.03.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2022 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **146 մլրդ ՀՀ դրամ-ով**, կամ **15.4%** ու կազմել **1.099 մլրդ ՀՀ դրամ**:
- Նշված աճը հիմնականում պայմանավորված է ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ի կանոնադրական կապիտալի աճով, որը ավելացել է շուրջ **128 մլրդ ՀՀ դրամ-ով**: Բանկի նոր բաժնետերերն են ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ ՍՊԸ-ը (75% բաժնեմաս) և <<Բնակարան երիտասարդներին>> վերաֆինանսավորում իրականացնող վարկային
- կազմակերպություն ՓԲԸ-ը (25% բաժնեմաս):

Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն - 31.03.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- Առ 31.03.2022թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **63%**-ը և հավասար է **692 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.03.2022թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **36%**-ը և հավասար է **393 մլրդ ՀՀ դրամ:**
- Առ 31.03.2022թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **1%**-ը և հավասար են **14 մլրդ ՀՀ դրամ:**

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.03.2022



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am